«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 96 500 456, +374 98 546 497
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT07-2402-C (1502)

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 7-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի

Ամսաթիվ՝	15 փետրվարի 2024 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11 / Zoom հարթակ
Նիստի սկիզբ՝	18:00

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝
Սարգիս Բաղալյան - ՀԽ նախագահ (առցանց),
Աշոտ Մկրտչյան (առցանց),
Արտավազդ Մինասյան (առցանց),
Դավիթ Փախչանյան (առցանց),
Լիլիթ Պետրոսյան (առկա),
Լևոն Բուդաղյան (առցանց),
Եվա Արևիկյան (առցանց),
Իրինա Գեյկո (առկա),
Տիգրան Բունիաթյան (առցանց),
Ռաֆֆի Ֆըսթըգճյան (առցանց):

Նիստին չի մասնակցել՝
Տիգրան Հարությունյան

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի տասնմեկ անդամներից տասը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:

Նիստի քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը (առկա):

Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցել են.
Տեր Մեսրոպ քհն. Արամյան («Այբ» դպրոցի ՀԽ-ի հիմնադիր նախագահ: Առկա),
Դավիթ Սահակյան (Գործադիր տնօրեն: Առկա),
Հայկ Պողոսյանը (Գործառնական տնօրեն: Առկա: Մասնակցել է հարց 3-ին),
Լիլիթ Մուրադյան (Ֆինանսական համակարգող: Առկա: Մասնակցել է հարց 3-ին),

Հարց 1. Օրակարգի հաստատում: Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն եղել: Որոշում՝ հարց 1 *1. Հաստատել ՀԽ-ի նիստի 2024 թվականի փետրվարի 15-ի օրակարգը:* *2. Ավելացնել հարց 8. «Արցախի աջակցության ծրագիր»:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 2. Նախորդ նիստից անցած ժամանակահատվածում դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ:
Հարց 3. 2024-2025 ուսումնական տարվա ուսման վարձերի սահմանման հարց:
Որոշում՝ հարց 3 *Որոշվեց ֆինանսաբյուջետային հանձնաժողովի ընդլայնված հանդիպում կազմակերպել՝ քննարկելու* *ուսման վարձի բարձրացման, ինչպես նաև մուտքի վճար սահմանելու հարցերը: Մինչև հանձնաժողովի հանդիպումը հարցը քննարկել տնօրենների հետ: ՀԽ-ին ուղարկել մասնավոր դպրոցների ուսման վարձերի և մուտքի վճարի մասին հավաքագրած տեղեկություն:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 4. Ընդունելության կարգի փոփոխություն:
Որոշում՝ հարց 4 *Որոշվեց հաստատել ընդունելության կարգի փոփոխությունները ըստ Հավելված 5-ի:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 5. ՀԽ-ի հանձնարարությունների կատարման հաշվետվություն/ 2021 թվականի սեպտեմբերից սկսած:
Որոշում՝ հարց 5 *Որոշվեց Հավելված 6-1-ի 64, 74, 75 և 76 կետերը համարել հաստատված, իսկ 71 կետը չեղարկել:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 6. Դպրոցի տնօրենների և «Այբ» կրթական հիմնադրամի գործադիր տնօրենի ՀԽ նիստերին մասնակցության հարցը:
Որոշում՝ հարց 6 *Որոշվեց,* *1. այսուհետ ՀԽ նիստերին կմասնակցեն դպրոցի բոլոր տնօրենները, բացառությամբ այն հարցերի, որոնց մասնակցությունը կսահմանափակվի ՀԽ կողմից:* *2. «Այբ» կրթական հիմնադրամի գործադիր տնօրենը ազատ է մասնակցել ՀԽ նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով, բացառությամբ այն հարցերի, որոնց մասնակցությունը կսահմանափակվի ՀԽ կողմից:* Որոշումը կայացված է միաձայն:
Հարց 7. Կազմակերպչական կառուցվածքում փոփոխություն:

Հարց 8. Արցախի աջակցության ծրագիր:
Կետ 8 ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր: Բոլոր հարցերը ներկայացնել մայիսի 2-ի նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ:
Կետ 9. Նիստի ավարտ Հանդիպումն ավարտվեց ժամը 20:20-ին:

ՀԽ նախագահ

Սարգիս Բադալյան _____

Նիստի քարտուղար

Սիրանուշ Սուքիասյան _____